



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Եւրոպական մամուլը թիւրքաց չայտատանի մասին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դիւղական արդիւնադրութիւնները Թիֆլիսի նահանգում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նաւակ Թիւրքիայից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՊԱՏԱՍԻՆՆԵՐ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Տաճկաստանի հայկաթօղկաց կաթողիկոսական-պատրիարքական աթոռը.

ԵՐԹՈՒՊԱՎԱՆ ՄԱՍԻՆԻՆ ԹԻՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Յայտնի է թէ Անգլիան յիշատակալիւ է ներկայացրել թիւրքաց կառավարութեանը պահանջներով որ Բ. Կուռը անցաւ մայրիկ չայտատանում այն բարենորոգումները որոնք խոստացված են այդ երկրին Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի զօրութեամբ, ձեռնարկելով իր պահանջը հաւանական վտանգ ներկայացնելով Թիւրքիային որ մի գուցէ ուրիշ որ և է պետութիւն պատրուակ ունենայ միջամտել օսմանեան պետութեան ներքին գործերի մէջ:

Մեր ընթերցողներին անշուշտ հետաքրքրիւ կը լինի ծանօթանալ եւրոպական մամուլի կարծիքին հետ անգլիական կառավարութեան կողմից այդ արած քայլի նշանակութեան մասին:

Գերմանական և աւստրիական մամուլը խօսելով անգլիական վերջիշեալ յայտարարութեան մասին, ընդհանրապէս այն միտքն են յայտնում որ ոչ գերմանիան, ոչ էլ Աւստրիան չափաւ չունենալով Արմենիայի մէջ, արեւելքում պատահած վերջին դեպքերը միմայն Անգլիայի վրա պարտաւորութիւն են դնում Արմենիայի մէջ բարենորոգումներ:

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՎԱՆ-ՊԱՏՐԻԱՐԿԱՎԱՆ ԱԹՈՐԸ

Ինչպէս յայտնի է Ունեցել (Զէյթունցիք) Տաճկաց կառավարութեան Աղբիւր-փաշայի հրամանատարութեան ներքեւ ուղարկած 4000-ի բանակը ջարդելու և թնդանութիւնը խելուց յետոյ մեծագոյն զօրութեան առաջ էլ կարողացան շարունակել իրենց պաշտպանութիւնը և ստիպելուցն վերջապէս տեղի տալ: Թիւրք կառավարութիւնը ասպատակութեան զլխաւորներէն նշանակեցին (4 հոգի) բռնեց և Կ. Պոլիս ուղարկեց, ուր իսկոյն բանտարկեցին Զէյթունցիք զինեցին ազգայնոց օգնութեան: Հաստատեան մէջ մտաւ և Ֆրանսիական զեապանի աղբիւրութեան շնորհիւ բանտարկեալներին թէ դատաւարութիւնից և թէ բանտից յաջողեցաւ ազատել: Թէպէտ այս խնդրում էլ Հաստատեան մեղադրուում է, որ նա այդ փոխութեան հրապարակում համար, բայց ինչ որ էլ լինի, սա ճշմարիտ է Հաստատեանի միջնորդութիւնը մեծապէս օգնած է Զէյթունի խնդրոյն: Այս դէպքից մի քանի տարի յետոյ էլ Հաստատեան մի ծանր պարագայի մէջ ցոյց է տուած իր ազդեցութիւնը: Նա յաջողեցաւ 1860-ին պուլղար-կաթօղիկները համար առանձին նուիրապետութիւն հաստատել տալ Կ. Պոլսում, և նոցա առաջնորդի համար առնել արքունի Բէրաթ: Հաստատեանի շնորհիւ կաթօղիկ բուլղարներն ազատեցան Յուստից Պատրիարքի իրաւասութեան ներքից:

Հաստատեան, որ գործելու և կաթօղիկութիւնն ու իր հաշիւն աւելացնելու համար ասպարէզ էր փնտռում միշտ, չէր կարող ի հարկէ գոհանալ իր ունեցած սղորդ թեմական նախագահ-արքեպիս-

րի մասին նախաձեռնութիւն ստանձնելու: Երբ զինքն չաւատացնում են որ այդ տեսակ կարծիք, նոյն իսկ պաշտօնապէս հաղորդել է Բ. Կրան երկու վերջիշեալ պետութիւնների կողմից նրանց Կ. Պոլսի զեապանների միջոցով:

Ինչ որ վերաբերվում է Ֆրանսիական կաթօղիկներին, նրանցից մի, օրինակ, «Le Soleil» լրագիրը, այն կարծիքն է յայտնում որ ոչինչ արդիւնք չէ յուսացվում Անգլիայի այդ արած քայլից, այսինքն Բ. Կրան յիշատակագրի ներկայացնելուց: Իսկ Ֆրանսիական մի քանի այլ լրագիրներ մինչև անգամ պարզ ասում են թէ Անգլիան այդ յիշատակագրի ներկայացնելով մի խաղ է կամենում խաղալ Թիւրքիայի հետ, իր անձնական շահերը աչքի առնել ունելով և ոչ թէ Արմենիայում, այլ մի ուրիշ երկրում, այն է Եգիպտոսում:

Ահա, օրինակի համար, ինչ ենք կարդում Փարիզի Ֆրանսիական մամուլի մի քանի օրգաններին մէջ:

Անգլիական կառավարութիւնից Բ. Կրան ներկայացրած վերջին յիշատակագիր մէջ կան հետեւեալ սպառնական խօսքերը. «Եթէ Թիւրքիան վարանի մոտեւում համար իրան ցոյց արված ճանապարհի մէջ, Անգլիան կը կարողանայ ստիպված լինել մեր-ժեղու թիւրքիային իր նախկին բարեկամութիւնը»։ Հաւատացնում են, շարունակում են Ֆրանսիական կաթօղիկները, թէ այդ յիշատակագիրը զբօսած է Անգլիայի կողմից միմայն իր մի խաղալի խաղը քաղաքական մտքով: Ասում են որ պ. Թորիլթըն, Կ. Պոլսի անգլիական ղեապանը, մասնաւորապէս յայտնել է սուլթանի շրջապատողներին, որ եթէ Թիւրքիան աւելի կամ պակաս ծառուկ կերպով յանձնի Եգիպտոսը անգլիական իշխանութեան արիւթեալութեանը, այն ժամանակ Անգլիան էլ, փոխարէն այդ ծառայութեան, ոչ թէ միայն լուրջութիւն

կը պահանջէ չայտատանի մէջ մոցնիլիլ բարենորոգումների մասին, բայց և այնուհետեւ նեցուկ կը դառնայ Թիւրքիային նըրա բոլոր եւրոպական խնդիրների մէջ:

Փարիզի մամուլի մի քանի օրգանները այնպիսի դադանք էլ են հաղորդում որ օսմանեան մի քանի շրջանների մէջ յայտնի է արդէն, իբր թէ Անգլիան ջանում է ցամաքի վրա իր կրած պարտութիւնները դարձնելու համար, հիմնել Եգիպտոսում մի արաբական կայսրութիւն, անգլիական հովանաւորութեան տակ: Այս պատճառով Թիւրքիան խիստ մոտատանջութեան մէջ են ընկած, զիտեսելով որ եթէ Անգլիայի թշնամութիւնը կարող է վտանգի ենթարկել Թիւրքաց կայսրութիւնը, արաբ-անգլիական մի կայսրութիւն էլ երևան դաւով կարող է կատարելապէս կործանել իսլամութիւնը, որի «խալիֆան» ինքն սուլթանն է:

Հետեւապէս Ֆրանսիական կաթօղիկները հաւատացնում են որ անգլիական յիշատակագիրը ամեն խնդիրներից աւելի է դրաւել սուլթանի և առհասարակ Բ. Կրան ուշադրութիւնը, նոյն իսկ Բոլղարիայի խնդրից էլ աւելի, թէև այս վերջինը մի ծանր կերպարանք էլ առած լինելու:

Եւ եթէ Անգլիայի պահանջները Թիւրքաց-չայտատանի բարենորոգումները շուտով իրականացնելու մասին Թիւրքիայի այդ աստիճան մեծ ուշադրութիւն են դրաւել, Թիւրքիան այնու ամենայնիւ շատ լաւ է հասկանում որ Անգլիայի յիշատակագիրը իսկապէս չայտատանին չէ վերաբերվում, այլ Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը միմայն պատրուակ է Անգլիայի ձեռքում իրան համար մի անհամեմատ աւելի նշանաւոր նպատակին հասնելու, այն է Եգիպտոսը ձեռք բերելու, որին հասնելուց յետոյ, Անգլիան կրկին կը գործէ չայտատանը Թիւրքիային, իր համար

ոչինչ օգուտներ, ոչինչ շահեր չը տեսնելով այդ երկրի մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՎԱՆ ԱՐԴԻՒՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖ-ԼԻՍԻ ՆԱՀԱՅԳՈՒՄ

Անուանեալ նախ և առաջ մասնաւոր կալուածատէրերի ամենապայտնի անտառները, և ապա թագաւորական նշանաւոր անտառապատ ամառանոցները Մասնաւոր անտառների մէջ իրանց նշանակութեամբ և հարստութեամբ առաջին տեղն են զբաղում Մեծ Խչանի Միխայիլ Նիկոլաւիչի Բորժոմի կալուածքի անտառները, Աթաբեգովի անտառները, Վարթանովի, Ավարովի, Յիգիանովի, Բայբութովի, Օսմարովի, Էջմիածնի վանքի անտառները: Մասնաւոր անձինք խիստ շատով ունենացնում և կորստում են իրանց անտառները, որոնք ընկել են նրանց ձեռքը շնորհիւ անտառային վարչութեան թուլութեան: Աւելորդ է թուել այն թշուառութիւնները, որ հետեւեալ կը լինեն այն քանի, եթէ անգլիական տարածութիւնների անտառներից կը մերկանան. ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ անտառների ոչնչանալուց յետոյ, կոչնչանայ և դիւղացու աշխատանքի մի գլխաւոր ձեւը: Այդ դէպքում շատ մեծ նշանակութիւն ունի կալուածների սահմանների որոշման (մէթէվանիէ) վերջացնելը. չէ որ անտառատէրը միայն այն ժամանակ կարող է պատշաճաւոր կարգի մտցնել և բարուքել իր կալուածները, երբ որ հաւատարմացած կը լինի, թէ իր զորութիւնը հաստատ է Բուրուլլին ուղիւ պատրիկ են ներկայացնում թագաւորական անտառները, այդ անտառների մէջ որոշված են նիւթերի (փայտերի) գները իրանց յատկութիւնների համեմատ, որ մեծ

նը Գրիգոր Պետրոս Բ. (1843—1886) մահուանից առաջ նոյնպէս աշխատում էր, որ իր աթոռը միացնէ Կ. Պոլսոյ Պատրիարքական աթոռի հետ, բայց այդ փառքը պահված էր Անտոն Պետրոս Թ.-ին (Հաստեւ):

Գրիգոր Պ. Բ.-ի մահուանից քանի մի ամիս յետոյ Կիլիկիոյ այդ պատրիարքութեան եպիսկոպոսներն ժողովեցան ի Զմմառ նոր պատրիարք ընտրելու: Հաստեւեան ունէր իր զորեակները, որոնք սկսեցին յաջողեցնել նրա ընտրութիւնը և նրա անձին վրա երկու աթոռների միութիւնը: Այս մասին նա արդէն առած Հռոմի հաւանութիւնը, որն և իր ներկայացուցչի, Սրուռ-դէմի լատին պատրիարքի, Վալերիայի միջոցաւ սղորդում էր ժողովի վրա ի նպատակ Հաստեւեանի Բարութիւնը կատարելու և Կ. Պոլսոյ պատրիարքը ընտրելու. Կաթօղիկոս Տանի Կիլիկիոյ Պէտք է ասած, որ թէպէտ նոյն ժամանակի հայ կաթօղիկները մի մասն հակառակ էր յայտնում իրան այդ միութեան, սղորդած զանազան կողմ-նակի պատճառներից, սակայն մինք կարծում ենք թէ այդ միութիւնը շատ կարեւոր էր. վասն զի երկու աթոռներն էլ հաւատացելուց այնքան փոքր բաղմութիւն ունէին, որ առանձին առած, երկուքն էլ երբեք նշանակութիւն չէին կարող ունենալ, ուր որ զոցա միութիւնը Հաստեւեանի նման մի քաղաքապետ անձի ձեռքում կարող էր ընդհանուր աթոռին յառաջադիմութեան պատճառ լինել: Սակայն Հաստեւեան իր հանձնարք և ազդեցութիւնն ի նշան հայ-կաթօղիկ ազգային եկեղեցւոյ ի գործ դրած:

Հռոմոյ առաջ իր պատին ու յարգը չը կորցնելու համար և նաեւ իբրեւ կաթօղիկ եպիսկոպոս և հռոմէական եկեղեցւոյ Գլխոյն խոնարհ սպա-նարկու, նա յօժարամտութեամբ ընդունեց Հռոմայ առաջարկած նոր որոշումներն հայ-կաթօղիկ եկեղեցւոյ ներքին կառավարութեան մասին, ա-նուշաղկի թողնելով բոլորովին այդ եկեղեցւոյ ժողովրդական իրաւունքներն: Նրա այդ վարմուն-

քին մի անգլին ղէնը դարձաւ իր հակառակորդների ձեռքին, որոնց հետ միացաւ և հատարակութեան միջից ժողովրդական իրաւանց պաշտպան մասը և այդպիսով խմբեցաւ հակահաստեւեանի համալիրը: Իրանանի կամ նախկին Կիլիկիոյ աթոռը միացած Կ. Պոլսոյ «Նախագահական» թեմին—կաթօղիկային այժմեան Կ. Պոլսոյ հայ-կաթօղիկաց կաթօղիկոսական-պատրիարքական աթոռը, որի պետը մինչև ցարդ կրում է «Պատրիարք Տանի Կիլիկիոյ» տիտղոսը: Կիլիկիոյ կաթօղիկ հայոց պատրիարքութեան իրաւասութիւնը ասարածվում էր Ասորիք, Միջագետք, Փարս-Հայք և Եգիպտոս, որոնք բոլանդակում էին մօտ 40,000 հայ կաթօղիկներ: Հաշու, Մերդին, Մա-րաշ, Աղսնա, Ամասիա և Տիգրանակերտ քաղաքներում ունէր արքեպիսկոպոսական աթոռներ: Այս թեմերը Կ. Պոլսոյ ժամանակ իրենց հոգեւոր վարչութեան ներքեւ ունէին 75,000-ի մօտ ժողովուրդ: (Սրանց թիւը այժմ անցնում է արդէն 100,000-ը):

Ինչպէս վերեւ յիշեցինք, Հռոմոյ աթոռը հայ-կաթօղիկաց երկու նուիրապետութեանց միացումը հաստատելուց յետոյ ընդհանուր հայ-կաթօղիկ եկեղեցւոյ մէջ գործադրվելու համար նոր կանոն-ներ և որոշումներ առաջարկեց, ի լաւագոյնս բարեկարգութիւնը Հաստեւեանի նման մի քաղաքապետ անձի ձեռքում կարող էր ընդհանուր աթոռին յառաջադիմութեան պատճառ լինել: Սակայն Հաստեւեան իր հանձնարք և ազդեցութիւնն ի նշան հայ-կաթօղիկ ազգային եկեղեցւոյ ի գործ դրած:

Բէվերսուրսի մասին թէպէտ իր ժամանակին բաւական խօսված է, սակայն դարձեալ աւելորդ չէնք համարում նրա ժողովրդավարութեան կարեւորագոյն մասերը աստ յառաջ բերել, մեր յօդուածի ծաւալը չի ների ընդհանուր կոնդակը յառաջ բե-

նշանակութիւնն ունի իւրաքանչիւր արդիւնաբերութիւնէ համար: Իրաւ է, որ այդ գնահատութիւնը յաճախ թղթի վրա է մնում, սակայն ընդհանրապէս այդ գնահատման գնը, այսպէս թէ այնպէս, ազդում են փոքր արդիւնաբերողի տնտեսական գործունէութեան վրա: Մասնաւոր անտառատէքերը, թաղարկական սակազնիք (տակսայից) շատ աւելի է ժամանակ ծախելով իրանց արդիւնները, հէնց դրանով նպաստում են այն բանին, որ թաղարկական անտառները փայտեղէնի վաճառումը և արտադրութիւնը պակաս է լինում: Եթէ թաղարկական անտառները ստացված փայտեղէնը ծախելու է Ախալցխայի բազարում և այդ վաճառահանութիւնը կատարելապէս չէ ոչնչանում մասնաւոր անտառատէքերի մրցութեան պատճառով, դա նրանից է, որ նախ՝ թաղարկական մի քանի անտառներ մօտիկ են վաճառաւորողին և գետին, և երկրորդ՝ որ մասնաւոր կալուածատէքերի անտառները շատ սպառված են:

Վերոյիշեալ տեղական արդիւնաբերութիւններին վերաբերում է նոյնպէս շինութիւնները և վառելիքի համար կուր գետով բերած փայտեղէնը և գերանները: Սակայն գիւղացիք իրանց լատափայտները չեն տանում հեռու տեղեր, այլ ծախում են ամենամօրժ կայարաններում: Գրա պատճառը կուր գետով մէկ բան տանելու հետ միացած դժուարութիւններն ու վտանգներն են, որոնց յաղթել կարող է միայն այնպիսի մի մարդ, որ մանկութիւնից ընտելացած է բնութեան տարրերի հետ: Ձեռքի արմուճիկներ, աչքի ճշգրտութիւնը, վտանգի բոլորէին սառնաստորութիւնը, պատրաստականութիւնը համարձակ կերպով նայել մահուան աչքերին, ահա այն յատկութիւնները, որ պահանջվում են լատափայտից—մէկ տիպի է: Հասկանալի է, որ այդ յատկութիւնները կարող են զարգանալ մինչև հարկաւոր կատարելութեանը միայն նրա մօտ, որը մեծացել և կրթվել է արագընթաց կուրի վրա: Ահա թէ ինչ է պատճառը, որ փայտեղէնի արտահանութիւնը կուր գետով կազմում է միայն որոշ գիւղերի առանձնակի պարագաները, և թէ ինչ է պատճառը, որ իրանց արտահանողները, գերանները հասցնելով մինչև գետի ափը, չեն վտահանում կուր գետով հասցնել գերանները իրանց ցանկացած տեղը, այլ ծախում են լատափայտ մերձակայ նաւահանգիստներում: Մի և նոյն լատափայտը չեն տանում կուր գետով լատափայտեր, իւրաքանչիւրը նրանցից ունի իր որոշեալ հողաբաժինը և իր ծանօթ նաւահանգիստը լատափայտեր առնելու և ծախելու համար, և այդ տեղից հեռու չի գնայ: Այդ գործով պարել, որ շատ արժանի է ուշադրութեան, ի հարկէ այս խնդրով հետաքրքրողներին համար:

Բէվէրսուրում ինչպէս յայտնի է լատինական բառ է և նշանակում է «դառն աւելի» *) և առաջին բառն է պապական կոնդակի: (Ինչպէս յայտնի է Հռոմայ քահանայապետաց կոնդակները յիշվում են իրենց առաջին խօսքերով): Կոնդակը արված է 1867 ամի յուլիսին: Պարունակած կարգադրութիւններն հետեւեալներն են:

Ա. Լիբանանու կաթողիկոսական և Կ. Պոլսոյ նախագահ-արքեպիսկոպոսական Աթոռոց և նոյն թեմի միաբնակ Անտոն եպիսկոպոսի անձի վրա և այսուհետեւ սրա և իր յարգողների «Պատրիարք Կիլիկիոյ Հայոց» կոչվելը:

Բ. Պատրիարքի ընտրութիւնը պէտք է կատարվի միմիայն եպիսկոպոսների ձեռքով և քահանայք ու ժողովուրդը իրաւունք չունին բնաւ ու և է կերպով մասնակցելու այդ ընտրութեան:

Գ. Հինգ տարին մի անգամ պատրիարքը պէտք է այցելութիւն անէ Հռոմ, պապին և հաշի տայ իր պատրիարքութեան վերաբերեալ գործոց մասին, ընդունելով ընդմիջին պապի խրատներն և հրամանները:

Դ. Հայ-կաթողիկոսաց եկեղեցիների ստացումները և Պոլսոյ պատրիարքը, առանց Հռոմայ քահանայապետին կանխաւ յայտնելու, իրաւունք չունի ոչ ծախելու, ոչ պարգևելու, ոչ գրաւ դնելու և ոչ փոխելու, վերջապէս ոչ մի կերպով օտարացնելու:

Ե. Երբ պատրիարքութեան մի միճակը թափուր մնայ իր առաջնորդից, պատրիարքը պէտք է սինոդ գումարէ եպիսկոպոսներից և 3 եպիսկոպոս

*) Որպէս զի աւելի հասկանալի լինի մենք յառաջ ենք բերում կոնդակի առաջին տողերը: «Միմիայն որդին Աստուծոյ՝ այս աշխարհից իր շօր մօտ դառնալիս...»): Լատիններէնում այդ վերջին բառը դրված է սկզբին—ինչպէս և հայերէնը գրաւոր թարգմանութեան մէջ. «ի դառնալիս...»:

րապոզները նման են փոքրիկ ձեռնարկողներին, որոնք միայն շատ սահմանափակ չբնաւ ունեն իրանց գործունէութեան համար: Կուր գետի վրա եղած կարարանները, ուր լատափայտերի առնաւոր է լինում, եթէն են հաշվում, որոնք են՝ 1) Աջխուր, 2) Գլխի, 3) Բործոմ, 4) Ախալքաք, 5) Խաչուր, 6) Կարելի և 7) Թիֆլիս: Մի քանիսները առնում են լատափայտեր Գլխուր և ծախում են Բործոմում ուրիշները վրա, նրանք էլ իրանց կողմից հասցնում են լատափայտերը մինչև Ախալքաք և Խաչուր կամ թէ մինչև Կարելի: Կարելիում լատափայտերը անցնում են նոր մարդկանց ձեռքը, որոնց հասցնում են դրանց Թիֆլիս: Խաչուր ձեռնարկողները, որոնք լատափայտերը գետով հասցնել պարագայից չեն, շատ փոքր գեր են խաղում լատափայտերի առնաւորի մէջ: Ոչ մէկը նրանցից չի գնայ Գլխի կամ Բործոմի վաճառաւորողը առաջին ձեռքից լատափայտեր առնելու և Թիֆլիս հասցնելու համար աւելի է ժամ գնում, որովհետեւ Գլխուր կամ Բործոմում առած լատափայտերը նրան նոյն գնով են նըստում, ինչ գնով որ նրանք կարող էին առնել գիւղացիներից Թիֆլիսում: Այդպիսի խաչուր ձեռնարկողին, ինչպէս և առհասարակ անձանց լատափայտին, լատափայտեր պատրաստող գիւղացիներից ոչ մէկը չի վտահանայ ծախել նոյն շահաւէտ պայմաններով, ինչ պայմաններով էլ նա տալիս է լատափայտերը ծանօթ մէկ տիպին:

Ամիսագործութիւնը կենտրոնացած է բացառապէս մասնաւոր անտառներում, Ախալցխայի անտառապետութեան սահմաններում: Այդ ամենաբնիկ շահ տուող արդիւնք է և գիւղացիք կարող են պարագայի դրանով տնտեսական խիստ նեղ դրութեան մէջ գտնված ժամանակ և երբ շահաւէտ ուրիշ գործեր չը կան: Բաւական շահաւէտ կարելի է համարել և հիւսիս աշխատանքը, որը զբաղված է տնտեսութեան համար զանազան պատկանելիքների պատրաստութեամբ: Այդ ձեռագործները լրացնում են միայն գիւղական ազգայնականութեան կորիքները, որովհետեւ դրանց խիստ կոպիտ են որ կարողանան հաւանկել լինել քաղաքացիներին: Այդ արդիւնագործները պատրաստում են առանձին սեղաններ (խոնչաներ) կարճ նեղակնիքով ոտների փոխանակ, չէրէֆներ, աթոռներ, անօթներ և սալի ուրիշ մասեր: Փայտի արդիւնաբերութիւնը մասնաւոր մեծ նշանակութիւն ունի Ախալցխայի և Ախալքաքի գաւառների ազգայնականութեան համար, և նրա նըստից բաղկացեալ մի ընտանիք ցանկ ներկայացնէ Հռոմ: Պապը այդ երեքից մին կը հաստատէ առաջնորդ թափուր մնացած աթոռի վրա, իսկ եթէ 3-ի էլ ընտրութիւնը անարժան համարէ, կարող է իրանից բացարձակապէս մի ուրիշին եպիսկոպոս ձեռնադրել և առաջնորդ նշանակել:

Զ. Հայ-կաթողիկ եպիսկոպոսաց ժողովի որոշումներն պատրիարքն պէտք է յանձնէ Կ. Պոլսոյ լատին նուիրակին, որ իր կողմից կողարկէ Հռոմ, Հատաոյ Տարածման (Պրոպագանդա) ժողովին: Այս վերջինը նոյնը խնամով և ճշգրտութեամբ ընկնելուց յետոյ կենդանիք քահանայապետութիւնը զատառանի ներքեւ:

Է. Այս հրովարտակից առաջ հայ-կաթողիկ եկեղեցւոյ վերաբերեալ բոլոր սովորութիւնք, առանձնաշնորհմունք (ի բաց առեալ ծէսերն ըստ արեւելեան կարգի) և մասնաւոր ժողովներն ջնջված են: Եւ վերջապէս

Ը. Եթէ «ընդ մի արդիւնք» այս հրովարտակին հակառակ վարտի «չանդուգն ժպրոսիւնիւ», այնպիսին «գիտասցէ թէ՛ք արտոնութիւն Ամենակալին Աստուծոյ և երանելի առաքելոց Պետրոսի և Պողոսի եղիցի ի վերայ նորա»:

Ահա Բէվէրսուրում կամ «ի դառնաւալը» իր բոլոր մերկութեամբ: Ապագայ պատմութիւնը լաւագոյն կորոշէ, ի հարկէ թէ Հասունեան ինչ աստիճանի մեղաւորութիւն ունի սրա մէջ: Հասունեան կրկին աթոռի պատրիարք ընտրվելուց մօտ մի տարի յետոյ դիմեց Հռոմ, ուր արեւելեան պատրիարքաց համար որոշված երդումը տալուց յետոյ ի նշան հպատակութեան ընդունեցաւ պալլիումը, առանց որչա, Բէվէրսուրումի համմատ, նա չունէր իրաւունք, ըստ ինքեան, ոչ եպիսկոպոս օծելու, ոչ եկեղեցի և ոչ միւսն օրհնելու և ոչ էլ ժողով գումարելու:

Բէվէրսուրումի հրատարակութեան միջոցին Հասունեան Հռոմում էր գտնվում, և միայն բերեց Կ. Պոլսի այդ չարագուշակ կողմակից:

Հանակութիւնը, որպէս աշխատանքի աղբիւր, աւելի ևս մեծանում է մեր աչքում, եթէ աչքը առաջ ունենանք այդ դաւաճների սակաւահողութիւնը: Թիֆլիսի նահանգի Ախալցխայի դաւաճում տարածված են փայտի արդիւնաբերութեան բոլոր տեսակները, սկսեալ վառելու փայտից մինչև թիւր, ամաններ և հասարակ կարասիք:

ՆՆՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են, որ գերեւալ-մաշիօր, հայազգի իշխան Ալեքսանդր Երկայնաբազուկ-Արդուլեան, մի քանի օր առաջ Պետերբուրգից ժամանելով Մոսկւա, յանկարծակի վախճանվեցաւ այդտեղ, կարճատև հիւանդութիւնից յետոյ: Հանդուցեալի դիտարկութիւնն էր ճանապարհորդել դէպի Կովկասեան հանքային ջրերը բժշկվելու համար, բայց անակնկալ մահը խափանեց նրա այդ դիտարկութիւնը: Օգոստոսի 25-ին կատարվեցաւ հանդուցեալի թաղման հանդէսը, որին ներկայ էին թէ՛ նրա մօտ ազգականներն ու բարեկամները, թէ՛ Մոսկւայի հայ հասարակութեան ականաւոր անձինք և թէ՛ բազմաթիւ ժողովրդականք:

Պետերբուրգում հրատարակվող ռուսաց «Новое Время» լրագիրը, որ շատ մեծ կարծիք ունի իր նշանակութեան մասին ոչ թէ միայն Ռուսաստանում, բայց և ամբողջ Եւրոպայում, որ ամեն օր ինքնահաւան կերպով վճարում է զանազան երկիրների քաղաքական, տնտեսական, բարոյական և մտաւոր կեանքի խնդիրները—լաւ կանէր որ փոքր ինչ աշխարհագրութիւն սովորէր: Յիշեալ մեծ թերթը թիւրքաց-Հայաստանի վրա յօդուածներ գրելով, անդադար չէ ան, քաղաքի տեղ «Вѣна» (Վիեննա) բառ է գործածում: Մի-թէ ռուսաց մեծ թերթի խմբագրութիւնը իրան փոքր ինչ նեղութիւն չէ կարող տալ և նայել աշխարհացոյցի վրա, այն ժամանակ նա կը համարէր որ թիւրքաց-Հայաստանի վաղուդական մայրաքաղաքը Վան է կոչվում և ոչ թէ Վիեննա:

Օգոստոսի 22-ին լրացաւ երեք տարին ռուս նշանաւոր դրող Իվան Ալեքեևիչ Տուրգենիւի մահվանից յետոյ: Այդ օրվա յիշատակի առիթով Պետերբուրգում տեղի ունեցաւ հոգեհանգիստ որին ներկայ էին բազմաթիւ գրողներ և հանդուցեալ տաղանդաւոր գրողի գերեզմանի վրա գրվեցան մի քանի պատկեր:

Կ. Պոլսում նա աճապարեց կատարել իր կաթողիկոսութեան օրհնութեան հանդէսը և մայր եկեղեցում կարգաւ տուաւ հրապարակապէս Բէվէրսուրումը իբրեւ Ս. Քահանայապետի հայոց եկեղեցւոյ լաւագոյն կարգաւորութեան համար որոշած մի կարգադրութիւն: Այդ միջոցին էր, որ հասաւ Պիոս Թ.-ի ընծան մայր եկեղեցւոյ—Ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարը (մի օրը և չղթաների մի մասը...):

Կաթողիկոս օրհնվելուց յետոյ Անտոն Պիոս Թ. յաջողեցաւ ստանալ նաեւ արքեպիսկոպոսական բերաթ: Բարձրագոյն Դռնից:

Մինչև այս ժամանակ մի յայտնի հակառակութիւն չը պատահեց ընդդիմադիր կողմից, սակայն երբ նորեն արդիւնքի միջոցները ձեռք առաւ reversurus-ի պահանջմանց համմատ վարվելու, խռովութիւնը բոլորեցեալ և հեղհեղեղ տարածվեցաւ հայ-կաթողիկ ժողովրդեան ամեն դասակարգի մէջ: Ժողովուրդը բաժանվեցաւ երկու կուսակցութեան: Նշեալ որոնք հակառակ էին իրերի նոր դրութեան, կոչում էին իրանց «Արեւելեան կաթողիկներ», բայց առհասարակ ծանօթ էին «Հայկաստանեան» կամ անթի անունով, որ համառոտութիւնն էր ֆրանսերէն անթի-հասունիսթ (Anthassouniste—հակահասունեան) բառին: Իսկ Հասունի կողմնակիցները, որոնք միշտ աւելի բազմաթիւ են եղած, կոչվում էին հասունեան, կամ հասունիսթ: Հակահասունեան խումբը կազմում էին Կ. Պոլսոյ նշանաւոր գերդաստաններից, Տիւղեաններն, Կէօգեան, Չամիչ Յովհաննէս Էֆենդի (նախկին միմիար) Սաղըղեան, Ապոլլոնիան և այլն, նոյնպէս և գաւառներում քաղաքի մեծամեծների զիւաւոր մասը, Կ. Պոլսում գտնվող Վենետիկի Միսիոնարներն, ամբողջ Անտառեան կրօնաւորաց միաբանութիւնը, և աշխարհական քահանայից մի փոքր մասը: Քահանան Սուրբառ եպիսկոպոս, որ այդ միջոցին Հռոմ էր, Վատիկանի Սինոդի պատճառաւ, առանց պապից հրաման խնդրելու թողեց ժողովն և և

Բրեստ-Լիտովսկից, օգոստոսի 29-ից «Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ «Правит. Вѣст.»-ի հետեւալ թղթակցութիւնը: Այն ճանապարհի վրա, որով պէտք է անցնէին Նոյս Կայսերական Մեծութիւնները, չինված էին երկու յաղթական կամարներ: Կամարների մօտ կանգնած էին տեղական ռուսահայերի աշակերտները և աշակերտութիւնները: Նոյս Մեծութիւնները բարեհաճեցին մտնել տաճար, որտեղ դիմաւորեց տեղական հոգեւորականութիւնը: Եկեղեցւոյ Նոյս Մեծութիւնները դիմեցին բերդապետի դրանը: Թագաւոր Կայսրը ողջունեց այնտեղ կանգնած պատուաւոր պահապանները: Ապա Նոյս Մեծութիւնները բարեհաճեցին մտնել բերդապետի տան սենեակները: Նոյն տանը իշխաններն և Մեծ Խշխաններ՝ Գեօրգի և Վլադիմիր Ալեքսանդրովիչները և Միխայիլ Նիկոլաևիչը: Նախաճաշիկից յետոյ Նոյս Մեծութիւնները ժամը 3-ին բարեհաճեցին այցելել Բրեստ-Լիտովսկի զինուորական հիւանդանոցը: Հիւանդանոցից Նոյս Մեծութիւնները դիմեցին զինուորական կայարանը, որտեղ պահվում են փոստային աղանձներ՝ պատերազմական նպատակների համար: Քաղաքը և ամբողջ զարդարված էին զրօշակներով, վահաններով և Նոյս Մեծութիւններին վերջերներով: Երկուրեան 8 ժամին Բրեստ-Լիտովսկի հասաւ պրուսական պրինց Վիլհելմը: Նուազածուների խումբը հնչեցրեց դերանախան հիմնը: Երկաթուղու կայարանից Թագաւոր Կայսրը և պրինցը դիմեցին դէպի բերդապետի տունը, որտեղ պրինցը ներկայացաւ Թագուհի Կայսրուհուն: Տրվեցաւ ճաշ, որին ներկայ էին միմիարները, սվիտան և պրինցին ուղեկցող անձինքը: Միւս օրը, օգոստոսի 30-ին, Թագաւոր Կայսրի անուանուկուլութեան օրը, Նորին Մեծութիւնները, պրինց Վիլհելմը և Մեծ Խշխանները ներկայ էին ամբողջ եկեղեցւոյ ու պատարագին: Եկեղեցւոյ մուտքի մօտ հաւաքված էին զինուորական բարձր ստորադասները, կանաչը և ամբողջ ծխական զորքի աշակերտութիւնները և աշակերտները: Պատարագից յետոյ Նոյս Մեծութիւնները և Բարձրութիւնները դիմեցին դէպի դրը, որը անցաւ հանդիսաւոր մայրով: Ժամը 1-ին Սպայական ժողովարանում նախաճաշ արվեցաւ: Ներկայ էին և սպաները: Նախաճաշի ժամանակ Թագաւոր Կայսրը խմեց Էլէք-Բորովիչեան գնդի կինացը: Մեծ Խշխան Նիկոլայ Նիկոլաևիչը առաջ առաջարկեց ինքնակալ Թագաւորի կինացը: Այդ օտուտը ընդունվեցաւ հանդիսաւոր և երկարատև «Որդայով», որի ժամանակ նուազեցին ազգային հիմնը:

Կաւ մտաւ հակահասունեանց զրօշակի ներքեւ: Իսկ Հասունի կողմնակից մնացին Կ. Պոլսոյ և գաւառների բնակչաց և եպիսկոպոսներ և Պրոպագանդայի աշակերտ քահանայից մեծագոյն մասը: Իսկ Վիեննայի Միսիոնարները խոհեմութեան համարեցին չը դիմել ոչ այս, ոչ այն կողմը, (վասիղի նոյս արդէն Կ. Պոլսոյ աթոռին ստորանկալ չէին) և հեռու մնացին կողմնակցական կուռնիքին մասնակցելուց: Թէպէտ նոյնապից մի քանիք գտնվեցան, որ չը խնայեցին ջերմ աշակցութիւն հասունեանց դատին:

Բայց ինչ էր հակահասունեանց պահանջումը, նպատակը: Ահա մի հարց, որը պարզում էր ամեն մի հակահասունեան առաջնորդ շատ տարբեր կերպով: Նոյս մէջ կուսակցութիւնները ծագեցան հէնց այն կէտին երբ Հասունի *) խշխանութիւնը տապալելու համար առաջին անգամ ընդհանուր ժողով կազմեցին: Այսու ամենայնիւ նոյս պահանջումներն մենք կարող ենք հետեւեալ կերպով սահմանել. «Հասունեան տաւաց ազգի կամայ միացեցած էր երկու (Կ. Պոլսոյ և Լեւոնանու) աթոռներն, յոփշտակած էր կաթողիկոսութիւնն և պատրիարքական խշխանութիւնը, աշխատում էր տապալել եկեղեցական—ժողովրդական իրաւունքներն, իրենք ընդունում են Հռոմայ քահանայապետաց զիւաւորութիւնը և նոյնա արված հաւատոյ միջոցները, բայց արեւելեան եկեղեցիներում դարեւոր կերպով տիրած և ազգային իրաւանց բնաւորութիւն կրող սովորութիւններն և արարողութիւններն մասին՝ նոյս» (պատկեր) հրամաններն պարտաւորել չեն զանուս:

(Կը շարունակվի)

Հակահասունեանց զէպ ու ուն և աւ քաղաքականութիւնն ինքնազորով մի գրեթէ հրատարակեցին, որի մէջ մի տեղ խոսեց Հասունին չինել էին խառնու, որ նշանակում է թիւրքերէն ընտիր ալիւր, և այդ ալիւրից նոյս իրենց ստամոքսի համար զանազան կարկանդակներ էին եկում...:

վում էր ի պատիւ Նորին Մեծութեան անուանա-
կոչութեանը: Դեկտեմբերի վաղուկ միջոցին,
որի վրա գտնուում էր Նոյա Մեծութեանը վե-
զիւր, լսվեց թնդանութեան թնդանքը, որ գտնուում
էին «Գրաֆ-Բէրգի» վրա. այդ ժամանակ չորս
նուագախմբեր նուագում էին աղջկային հինգը
խառն թնդանութեան թնդանքի հետ, որոնք լըս-
վում էին բերդի ամեն ամբողջութեանը: Ժամի
12-ին Նոյա Մեծութեանը վերադարձան փայ-
լուն կերպով լուսաւորված ճանապարհով ամբողջ
կերակր թագաւորը դիմեց իշխան Վիլհելմի հետ
միասին դէպի կայսրանը կառքով. այդ կառքին
բարեհաճեց հետևել թագուհին, թագաժառանգ ցե-
սարկիսի և Մեծ իշխաններ Գեորգի և Վալդիմիր
Ալեքսանդրովիչներին հետ միասին: Նոյա Մեծու-
թեանը և Բարձրութեանը ուղեկցեցին հիւ-
րին մինչև վազմը և մնաւ բարե ասին նրան.
ինչպէս մնաւ բարե ասելու միջոցին, նոյնպէս և
դիմաւորութեանը կայսրը երկու անգամ համբու-
րեց իշխանին: Իշխանը ուղեկցեց Վալդիմիր
վրայով: Նոյա Մեծութեանը կայսրան գնալու
միջոցին, ճանապարհին գտնվող ժողովուրդը և
զորքերը շնորհաւորում էին Օգոստոսիան: Անձնե-
րին ողբերգով «ուրաններով»: Իշխանի մեկնելու
ժամանակ, Նոյա Մեծութեանը Նոյա Բարձ-
րութեանը հետ կայսրական գնացքով հետևե-
ցին մինչև Լիւքսեմբուրգ, որտեղ Նոյա Մե-
ծութեանը ներկայացաւ Մարիակաթին գաւա-
ռի զիւղացիների պատգամաւորութեանը, մատուցա-
նելով թագաւորին և թագուհուն աղ ու հաց:
Երկուստեք կայսրանից Նոյա Մեծութեանը
և Բարձրութեանը կառքերով դիմեցին զորա-
հանդէսները տեսնելու, որտեղից մօտ 4 ժամին
ճաշից յետոյ վերադարձան Վիսիօ-Լիտուիկ:
ՍՕՖԻԱ, 1 սեպտեմբերի: Երէկ կիրակի օրը,
խնամակալ Մուտիւրով և պատերազմական մի-
նիստը Նիկոլայով արեւելեան-բուլղարական զուգե-
րին բաժանեցին բոլգարական զորականներ, որոնց
օժել էր միտրոպոլիտը:
ՓԱՐԻՑ, 1 սեպտեմբերի: Պատերազմական մի-
նիստը Նիկոլայով պաշտօնապէս յայտարարում է, թէ
«La France Militaire» լրագիրը՝ որ մօտերումս
հրատարակել էր պատերազմական ոգով գրած մի
յօդուած, իր կիսապաշտօնական օրգան չէ:
Արտաքին գործերի մինիստրութեան վարչութեան
գլխավոր Գերլէտտին Բերլինի դեսպան նշա-
նակելը՝ փարիզեան մամուլը ընդունում է իր-
ան նշան, որ կը վերականգնեն Ֆրանսիայի և Գեր-
մանիայի մէջ լաւ յարաբերութիւնները:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի: Այսօր վե-
րահաստատվեց մաքսային կուպոնների պաշտօնա-
կան նոր գնահատութիւնը 165 ռ. 75 կ. թղթա-
գրամի 100 ռ. ոսկի անուանական արժողութեամբ,
նախկին 8 ռ. 25 կ. պոլովնիկայի գնահատու-
թեան փոխանակ:
ՎԻԵՆՆԱ, 1 սեպտեմբերի: «Fremdenblatt»
լրագիրը հաղորդում են Լիւբլինից, որ շաբաթ
օրը հանդիսաւոր ճաշիկերով իր կայսր Ֆրանց-Յո-
սեֆը առաջարկեց ուսուցիչ թագաւոր կայսրի կե-
նացը, որի միջոցին նուագախմբերը նուագեց ու-
սուցիչ աղջկային հինգը. երկուսն ստացվեց թա-
գաւոր կայսրի կողմից շնորհակալութիւն յայտնող
հեռագիրը:
ԿԻՒ, 1 սեպտեմբերի: Մեծ իշխան Ալեքսի
Ալեքսանդրովիչ այսօրից մեկնեց փարիզի վրայով
Բէրլին: Ռուսաց «Բերթալա» և «Յարնիւն»
եախտանքները կը մնան այսօրը դեռ ևս երկար
ժամանակ:
ՍՕՖԻԱ, 1 սեպտեմբերի: Ի պատասխան շնոր-
հաւորական հեռագրի՝ թագաւոր կայսրի անուա-
նակութեան առիթով, Նորին Մեծութեանը բա-
րեհաճեց հրամայել տեղիս ուսուցիչներին յայտ-
նել շնորհակալութիւն կառավարութեանը, հողե-
րականութեանը և հասարակութեան ներկայացու-
ցիչներին: Թագաւոր կայսրը հաճեց նոյնպէս յոյս
յայտնել, որ Բոլգարիան՝ որի բարեբախտութիւնը
չառ մօտիկ է Նորին Մեծութեան արտին, կարող
կը լինի ապահովել կարգապահութեան և հանգս-
տութեան բարեկեցութեան, որոց կարօտութիւնը ստի-
պողական է: Պատասխանին աւելացրած է, որ
ինչքան Բոլգարիան կարգապահ իր վրա դրած
յոյսերը, այնքան աւելի կը հաստատվի Նորին
Մեծութեան բարեկամական պաշտպանութիւնը:
Այսօր աղջկային ժողովը բացվեց, Ստամբուլով
իր ճառում ասեց, որ Տերնովում կը գումարվի աղ-
ջային մեծ ժողովը իշխանի ընտրութեան համար:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի: «Journal de
St. Petersburg» լրագիրը ցանկութիւն է յայտ-

նում, որ բոլգարական աղջկային ժողովը առաջ-
նորովի երկրի իսկական հաստատ շահերի համե-
մատ, որոնք, յաղթող հանդիսանալով անձնական
և կուսակցական շահերի վրա, կապահովեցին
Բոլգարիայի ապագան:
ԼՕՆԻՕՆ, 2 սեպտեմբերի: Այսօր կանչված
է ոչ թէ անգլիական դիւաւոր դեսպան Լասէլ,
այլ Սօֆիայում նշանակված անգլիական գործերի
նախկին հաւատարմատար Ստիվենս:
ՍՕՖԻԱ, 2 սեպտեմբերի: Սպասում են, որ մեծ
պետութիւնները կը հաստատեն Բոլգարիայում
կազմակերպած խնամակալութիւնը և հաւատարմա-
յնում են, որ մի քանի պետութիւններ հրամանա-
գրել են արդէն իրանց դիւաւորական գործա-
կանքներն անել այս մասին համապատասխան
յայտարարութիւն բոլգարական արտաքին գործե-
րի մինիստրութեանը:
ՎԻԵՆՆԱ, 2 սեպտեմբերի: «Neue Freie Pres-
se» լրագիրը հեռագրում են, որ աղջկային ժողո-
վը ընտրեց Տոնչիկին նախագահի օգնական: Ա-
լեքսանդր իշխանի պատկերը, որ գտնուում է
խորհրդի դահլիճում, քաղաքից մեկնելու ժամանակ
թանկ միջոցին ժողովը ընտրեց երկու յանձնա-
ժողով իր միջից, որոնցից մէկը պէտք է մշակի
պատասխան ճառի համար, իսկ միւսը պէտք է
ուղերձ պատրաստի թագաւոր կայսրին: Կարելի
է, որ ժողովը գոյգլի հինգաբլի օրը սեպտեմբերի
3/16-ին: Առաջարկված օրինագծերի մէջ գտնուում
է նոյնպէս և մի օրինագիծ՝ իշխան Ալեքսանդրի
Բոլգարիայում ունեցած մասնաւոր սեփականու-
թեան յետ գնելու վերաբերութեամբ: Եթէ ներ-
կառ տարում չը գումարվի սովորական աղջկային
ժողովը, այն ժամանակ եկող տարվայ բիւզետը
կը հաստատուի ներկայ տարվայ հաշի համեմատ:
Աղջկային մեծ ժողովը կը գումարվի չորս շաբա-
թից յետոյ Սօֆիայում, Ֆրիւկայօպօլում կամ
Տերնովում:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ
Սեպտեմբերի 2-ին
Ռուսաց 1 ռուբլ. լծիցնի վրա արժէ 235/16 պէնս.
— — — — — 197 3/4 պֆ.
— — — — — 245 1/2 սան.
Ոսկի — — — — — 8 ռ. 52 կ.
Մաքրային կուպոններ — — — — — 165 > 75 >
Արծաթ — — — — — 1 > 34 >
Բարապիսի գիւնդաններ — — — — — 4 > 60 >
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի 100 > 12 կ.
— — — — — 2-րդ — 100 > 25 >
— — — — — 3-րդ — 99 > 87 >
— — — — — 4-րդ — 99 > 62 >
— — — — — 5-րդ — 99 > 75 >
Արեւելեան 5% վախառու. 1-ին շրջ. 99 > 62 >
— — — — — 2-րդ — 99 > 62 >
— — — — — 3-րդ — 99 > 87 >
Նիդերլ. 5% առաջին փոխառութ. 238 > 75 >
— — — — — 2-րդ — 224 > 75 >
— — — — — 3-րդ — 105 > 25 >
Ռուսաց 1-ին շրջ. — — — — — 185 > 75 >
Նոր կոնսոլիդաց. փոխառութիւն. — — — — — 99 > 37 >
5% գրաւական թղթեր կայուն. — — — — —
փոխ. կրթ. ընկ. — — — — — 159 > — >
5 1/2% գրաւական թղթեր խրանդի
կայուն. բանկ. — — — — — 97 > 25 >
6% գրաւակ. թղ. խրանդի կայ. բան. 101 > 75 >
— — — — — Պոլտավայի — 101 > 75 >
— — — — — Պետ. Տօրակ. — 101 > 75 >
— — — — — Կիւպի — 102 > 50 >
— — — — — Մոսկովայի — 102 > 50 >
— — — — — Բեսարաբ. Տօրակ. — 101 > — >
— — — — — Նիդ. Սամար. — 101 > 25 >
— — — — — Վիենայի — 101 > — >
— — — — — Թիֆլիսի — 27 և 43 տ. 96 > 50 >
— — — — — Քուրթալիսի — 18 և 43 տ. 96 > 50 >
Վ. Օլովսկո-Կամեկի բանկի ակցիաները 569 > — >
Ռուսաց երկաթուղիների գիւտա. ընկ. 259 > 25 >
Բերլինով-Վ. Օլովսկի ընկ. — — — — — 96 > 50 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրի-
գայիաներ. — — — — — 95 > 25 >
Մոսկովայի քաղաք. օրիգայիաներ. — — — — — 95 > 75 >
Օրդուայի — — — — — 94 > 50 >
Նոր երկաթուղային բենտա — — — — — 158 > — >
Թիֆլիսի քաղաք. կրթ. ընկ. օր. — — — — — 86 > 25 >
Պետական բանկի 6-դ հրատարա-
կութեան տոմսերը — — — — — — > — >
Ս. Պետերբուրգի բորսայի արամագրութիւնը
հաստատ է:
ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ
ԳԱՐԱՅԻՉԱԳ. Ս. Ղ. Ուղարկեցինք ձեր պա-
հանջած 6 օրինակ «Эконом. пол. тур. арм.»
բրոշյուրակի և 2 օրինակ «Армянск. поэзия в
лицѣ Р. Патканяна» բրոշյուրակի:
ՇՈՒՇԻ. Լէօ. Շատ ուրախ կը լինեմք սուգարել
Գաղտնիք Գարաբաղի գրքի մասին քննադա-
տութիւնը: Միայն խնդրում ենք շատ մեծ չը լի-
նի. տեսնում եմ որքան նիւթեր ունենք: Զարմա-
նում ենք որ չէք հասկանում թէ ինչ պատճառով
չը տպվեցաւ ձեր «Մատենագրութիւնը»:
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՍԱԼՅԱՅԻ Հայոց դպրոցների հոգաբարձութիւնը յայտարարում է, որ Ախալցխա-
յի Հայ օրիորդական դպրոցի համար հարկաւոր է մի վարժուհի ուսուցիչ լեզուի, շա-
բաթական 22 դաս, տարեկան 600 ռուբլի առձիւղով: Աւարտած պէտք է լինի գիմնա-
զիծի ուղեւորող դասարանը, լաւ փայլականով: Ցանկացողներին առաջարկվում է դիմել
ուղղակի Ахалцихъ, Попечительству армянскихъ училищъ. 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է հասարակութեան ընդհանուր գիտութեանը, որ այս օրից սկսած ամենայն օր. առաւօտ-
եան ժամի 9-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ, կարելի է տեսնել 1887—1890 թվ. քառամասի
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ անուանացողականները: Այն անձինք, որոնք անխառն կերպով են
ներմուծված անուանացողականների մէջ, կամ բոլորովին բաց են թողնված, իրաւունք ունեն ներկա-
յացնել վարչութեանը իրանց նկատողութիւնները, սկսած սեպտեմբերի 7-ից մինչև 21-ը: Այսպիսի
նկատողութիւնները ամուսնեան կը ներկայացվեն Քաղաքային Գումարին: 1—3

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵՏԻ ԵՒ ԸՆԿ.
(N. PAQUET ET COM.)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Զօրեջրութիւն սեպտեմբերի 10-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգնաւոր, նաւա-
պետ ԺԻԲՈԻՆ (GIBOIN) զուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պօլս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօն, նախկին Արժ-
րուհի զարկուհում, № 103. 2—3

ԶԱԳՈՒՄԵՆԻ ԵՒ ԻՌԻԿԵԼԻ ՄԱՆԱՌՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ, իհարկան ուսումնարան-
ների և գիմնազիւնների չորս դասարանի ընթացքով: Միայն օրից առաջ, իհարկան
ուսումնարանի հանդէպ: Աշակերտների ընդունելութիւնները սկսված են: Պարագրմուհե-
րը կը սկսվեն սեպտեմբերի 1-ից: 3—5

АРМЯНСКАЯ ПОЭЗИЯ
въ лицѣ Рафаила Патканяна
Г. ЧАЛХУШЯНА
Продается въ Тифлисѣ, въ Центральной книжной Торговлѣ. Цѣна 50 к.
9—10

Ս. Վ. ԱՐԴՈՒԹԵԱՆ
(Որ աւարտել է մանկավարժական ֆրեդէլեան դասընթացը) լսողում է
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋ ԵՒ ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ «Ընդունվում են և գի-
շերթիկ աշակերտուհիներ: Ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 20-ին, առա-
ւօտեան ժամի տասնից մինչև երկուսը ճաշից յետոյ: Պարագրմուհիները կը սկը-
սեպտեմբերի 5-ից: Հասցէն՝ Վիկտորիայի փողոց, իշխան Ամատուհու տուն,
ներքին յարկը: Նոյն տեղում գտնվում է և ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԳՈՐ ՐԱՆԸ: 5—5

ԲԱՅԱՌԱՊԵՍ Պ. ԴԵՑԱՐԻԱՆՈՎԻ խնամութեամբ Սոլովի փողոցի վրա, № 10,
սկսած 1886 թվից, շատ ճշգին ընկերով մաքրում են վարագոյրներ այնպէս լաւ, որ նո-
րերից ոչնչով չեն զանազանվում: 3—6

Պատերազմաբղ ԳԱՍԱԳԻՐԻՆԻՆԻՍՈՒՅԻՉ ՌՈՒՍԱՅ ԼԵՋՈՒԻ Լ. Խոմե-
Աղետնիցի. գրաւաճառների մօտ 20 կոպէկ: 10—24 (Հ.)

Տպագրվում է և շուտով լցւ կը տեսնի Ս. Մանգլինեանցի աշխատանքում
ՌՈՒՍԱՅ ԼԵՋՈՒԻ ԳԱՍԱԳԻՐԻՆԻ: 2—3

ՄԻ ՎԱՐԺՈՒՇԻ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՊԱՇՏՈՆ Ունենալ Հայոց դպրոցներում կարող է
գտնաւորել ուսուցիչ լեզուից և սովորեցնել ձեռագործութիւնը: 2—3

ՄԻ ՕՐԻՈՐԴԻ ցանկանում է ՎԱՐԺՈՒՇՈՒ պաշտօն ունենալ Հայոց դպրոցներում:
Կարող է սովորեցնել և ձեռագործութիւն: Հասցէն խմանալ Մշակի՝ խմբագրատանը: 2—2

ՄԻ ուսուցիչ, որ աւարտել է իր ուսման ընթացքը Ներսիսեան դպրանոցում և
երկու տարի պարապել է ուսուցչութեամբ, ցանկանում է պաշտօն ունենալ Հայոց
դպրոցներում: Հասցէն խմանալ Մշակի՝ խմբագրատանը: 2—3

Կարսի Հայոց երկուս դպրոցների համար հարկաւոր են երկու ուսուցիչներ. ա)
մի ուսուցիչ շաբաթական 23 դաս հայերէնից, 3 դաս Հայոց պատմութիւնից և հա-
յոց աշխարհագրութիւնից առաջին և երկրորդ դասարանի համար, ուսմիկ 500 ռուբլի:
բ) Մի ուսուցիչ 23 դաս թուաբանութիւնից, 2 քառանկ պատմութիւնից և 3 գծա-
դրութիւնից առաջին և երկրորդ դասարանի համար. ուսմիկ 500 ռուբլի: Գիմել Մշ-
չակի՝ խմբագրութեանը: 2—2

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ երկուս դպրոցների համար ՀԱՐԿԱՌԻ Է ԵՐԿՈՒ ՌՈՒՍՈՒՅԻՉ
ուսուցիչ լեզուի համար լաւ ուսմիկներով: Պայմանների մասին դիմել Կենտրոնական
դրամաճառանոցը: 2—2

ՄԻ օրիորդ, որ աւարտել է իր ուսման ընթացքը Թիֆլիսի օրիորդական գիմնա-
զիւնում, ցանկանում է ուսուցչուհու պաշտօն փարել Հայոց դպրոցներում: Կարող է
գտնաւորել ուսուցիչ լեզուից, թուաբանութիւնից, աշխարհագրութիւնից և այլն: Հա-
ցէն խմանալ Մշակի՝ խմբագրատանը: 2—3